«Արտակարգ ալիք» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Տավուշ Մեդիա» նախագծի առցանց համայնքների մոդերացիայի ուղեցույց

«Արտակարգ ալիք» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Տավուշ Մեդիա» նախագծի (այսուհետ՝ Տավուշ Մեդիա) վերահսկողության տակ գտնվող հարթակներում իրականացվող մոդերացիայի ուղեցույցի նպատակն է.

- Պահպանել կառուցողական և ներառական միջավայր առցանց համայնքի համար:
- Հակազդել և բացառել այնպիսի դրսևորումները, ինչպիսիք են՝ թրոլինգը, սպամը, ոչ ակտուալ բովանդակությունը, ապատեղեկատվությունը և անձնական հարձակումները:

1. Արգելքի ենթակա գործողություններ

Տավուշ Մեդիայի վերահսկողության տակ գտնվող առցանց հարթակներում արգելվում են.

1.1. վիրավորանքը և բռնության կոչերը,
1.2. ատելության քարոզը, խտրականությունը,
1.3. պոռնոգրաֆիան,
1.4. հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության խախտումները,
1.5. վիրուսներ և չարամիտ ծրագրեր պարունակող հղումները,
1.6. որևէ անձի կամ խմբի դեմ ոտնձգություն գործադրելու կոչերը և սպառնալիքները,
1.7. դոքսինգը՝ կամ անձնական տվյալների հրապարակումը:

2. Խրախուսման ենթակա գործողություններ

Տավուշ Մեդիայի վերահսկողության տակ գտնվող առցանց հարթակներում խրախուսվում են.

2.1. դրական, կառուցողական մեկնաբանությունները, որոնք լրացնում և հարստացնում են հրապարակված տեղեկատվությունը,
2.2. հարգալից փոխհարաբերությունները լրատվամիջոցի և հարթակի այլ օգտատերերի նկատմամբ,
2.3. կառուցողական քննադատությունը, որն ուղղված է լրատվական բովանդակության և համայնքի բարելավմանը:

3. Մոդերատորների վարքագծի ուղեցույց

Կազմակերպության առցանց համայնքների մոդերացիայով զբաղվում են մոդերատորները։

3.1. Տավուշ Մեդիայի վերահսկողության տակ գտնվող առցանց հարթակների մոդերատորները պետք է ունենան միասնական մոտեցում կանոնների կիրառման հարցում՝ ապահովելով արդար և հետևողական մոդերացիա։

3.2. Մոդերատորները պետք է թափանցիկ լինեն և համայնքին ներկայացնեն այս կամ այն բովանդակությունը կամ օգտատիրոջը սահմանափակելու, ինչպես նաև խրախուսելու շարժառիթները։

3.3. Մոդերատորները պետք է հնարավորություն տան համայնքի անդամներին քննարկել տարաձայնությունները՝ պահպանելով հարգալից վերաբերմունք։ Մոդերատորները պետք է միջամտեն միայն այն դեպքում, երբ քննարկումները դուրս են գալիս սահմանված կանոններից։

3.4. Մոդերատորները պետք է պահպանեն էթիկական վարքագիծ՝ զերծ մնալով անհարկի գրաքննությունից։

3.5. Անհրաժեշտ է լինել քաղաքավարի, նույնիսկ այն օգտատերերի նկատմամբ, որոնք խախտում են կանոնները։

3.6. Մոդերատորները չպետք է անձնական կարծիքով առաջնորդվեն, այլ հետևեն կազմակերպության քաղաքականությանը։

4. Մոդերացիայի գործընթաց

4.1. Մեկնաբանությունների մոնիտորինգ

4.1.1. Կազմակերպության մոդերատորները պարտավոր են կանոնավոր կերպով ստուգել համայնքում տեղադրված բովանդակությունը։

4.1.2. Պետք է արագ արձագանքել և հեռացնել կանոններին հակասող բովանդակությունը։

4.2. Զգուշացումներ և արգելափակում

4.2.1. Կանոնների առաջին խախտման դեպքում մոդերատորը կարող է գրավոր զգուշացում ուղարկել։

4.2.2. Կրկնվող կամ լուրջ խախտումների դեպքում օգտատերը կարող է ժամանակավոր կամ մշտական արգելափակվել, պայմանով, որ արգելափակումները կվերանայվեն որոշակի պարբերականությամբ։

4.2.3. Մշտական արգելափակման որոշումը պետք է կատարվի կազմակերպության ներքին քննարկումից հետո։ Մշտական արգելափակումներ կիրառվում են այն օգտատերերի նկատմամբ, որոնք հետևողականորեն խախտում են համայնքի կանոնները կամ զգալի վտանգ են ներկայացնում։

4.3. Տեղեկատվության ստուգում և կեղծ լուրերի կանխարգելում

4.3.1. Եթե մեկնաբանությունը պարունակում է կասկածելի կամ ապատեղեկատվություն պարունակող տվյալներ, մոդերատորը պետք է փորձի ստուգել այն նախքան հեռացնելը:

4.3.2. Անհրաժեշտության դեպքում կարող են կցվել հղումներ վստահելի աղբյուրների կամ կազմակերպության կողմից հրապարակված նյութերին:

4.4. Թափանցիկություն և հաղորդակցություն համայնքի հետ

4.4.1. Եթե մոդերատորը հեռացնում է որևէ մեկնաբանություն, օգտատերը կարող է տեղեկացվել որոշման պատճառների մասին:

4.4.2. Համայնքի անդամները պետք է տեղեկացված լինեն մոդերացիայի կանոնների մասին և իմանան՝ ինչպես կարող են բողոքարկել որոշումները:

5. Վեճերի և բողոքների կարգավորում

5.1. Եթե օգտատերը դժգոհ է մոդերացիայի որոշումից, նա կարող է դիմել համայնքի ադմինիստրատորներին՝ պաշտոնական բողոք ներկայացնելու համար:

5.2. Ադմինիստրատորների խումբը պետք է վերանայի բողոքները և անհրաժեշտության դեպքում վերանայի մոդերացիոն գործողությունները:

5.3. Հնարավոր է կազմակերպել պարբերական հարցումներ՝ հասկանալու համայնքի կարծիքը մոդերացիայի որակի վերաբերյալ: